



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատմենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material









432

Ա. ՅԵՐԶՆԿՅԱՆ

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
—ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ—

Թարգմ. Բ. ՅԵՊԻԱԶՈՐՅԱՆ

१०८

१८-२३

631.9(47.92) Ա. ՅԵՐԶՆԿՅԱՆ

Ե - 84

ԱՍՈՒԳՎՈՅ Է 1961 թ.

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թարգմ. Բ. ՅԵՂԻՍ.ԶԱՐՅԱՆ



Պետական Հրատարակչություն. — Երևան. 1930

Խ. Ա. ԽՈՍՔԻՆԻ ՀԱՅ

A II  
10713

Հ. թ. № 1304.

Գրառեպվար № 5148 (բ).

Տիրաժ 4000.

Գետհրատի ասաջին տպարան Վաղարշապատում  
Գալիքը. № 68.

## I

**ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ ԶՔԱՎՈՐԻ ՅԵՎ ՄԻՋԱԿԻ ՄԻԱԿ  
ՈՒՂԻՆ Ե**

Կուսակցության դրած խնդիրը՝ գլուղատնտեսության արտադրական ուժերի աճումն արագացնելու գլուղի սոցիալիստական վերակառուցման բազալի վրա, Անդրկովկասի համար առանձնապես նշանակալից ե դառնում։

Անդրկովկասյան գլուղի անտեսական ձևերի և կենցաղաձևերի չափաղանց խայտաբղետությունն ու հետամնացությունը, անհատական տնտեսությունների մանր-փոշիացած դրությունը, լերկրամասի կուլտուրական չափաղանց հետամնացությունն ընդգծում են, թե գլուղատնտեսությունը բարձրացնելու միակ ուղին այն ե, վոր «հետզհետե» գլուղացիական մանր տնտեսություններից անցնենք խոշոր արտադրության ռելիերի վրա։

Դյուղատնտեսության կոլեկտիվացում՝ նշանակում ե անցում մանր ցրված տնտեսություններից խոշոր արտադրության ռելիերի վրա։ Այդ անցումը հնարավորություն ե տալիս ոգտագործել խոշոր տնտեսության ամբողջ շահավետությունը և չքավորին ու միջակին աղատում ե կուլակալին ճորտությունից։

Դյուղացիական մանր տնտեսությունը բարձր արտադրողականություն տալ չի կարող, վորովհետեւ նա

չի կարող մեծ քանակությամբ գլուղատնտեսական բարդ մեքենաներ գործադրել, նույնիսկ այն ինվենտարն ու անասունները, վոր գործադրվում են գլուղատնտեսության մեջ, լիակատար բեռնվածությամբ չեն գործադրվում և մնաս են բերում: Անհատական մանր տնտեսությունների մեջ յեղած համեստ ինվենտարն ել—ձիեր, յեզներ, գութաններ և ալյն—կիսով չափ են ոգտագործվում: Կոլտնտեսություններում վերոհիշյալ խոչընդուները վերացվում են, վորովհետեւ յեղած գլուղատնտեսական ինվենտարը—տրակտորներ, ձիեր, գութաններ և ալյն—կաշխատեն լիակատար բեռնվածությամբ:

Այսպիսով, խոշորագույն խնդիրները գլուղատնտեսության բարձրացման բնագավառում, մանավանդ նրա ապրանքայնության բարձրացումը, կարող են լուծվել միայն գլուղատնտեսության բոլոր պրոցեսների կոլեկտիվացման ռելիսերի վրա, վորովհետեւ արտադրության միջոցների հանրացումը վճռական դեր և խաղում մեր գլուղատնտեսության արտադրական հնարավորությունների բարձրացման գործում: Միայն կենգանի բարեուժի հանրացումն իսկ կրկնակի յէքարեացնում գյուղացիական անեստությունների արագրական հնարավորությունները:

Ենք այսպես, սոցիալիստական խոշոր տնտեսություն ստեղծելու ուղին միլիոնավոր մասսաներին կազմատի աղքատությունից և հնարավորությունն կտամեր հետամնաց գլուղատնտեսության մեջն առնել ժամանակակից գիտության և տեխնիկայի խոշոր նվաճումները: Մեր գլուղացին լուրացնում են այս ճշմարտությունը: Մենք վկաներ ենք մանր և մանրագույն

անհատական տնտեսությունների կոլտնտեսացման  
սելսերի վրա մասսալորեն անցնելու վեհասքանչ  
պատկերի:

## II

### ԿՈԼՏՆՏԵՍՐԺՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆ

Կոլտնտշարժման ուժգին աճումը չափազանց սրեց  
դասակարգակին պալքարը գյուղում:

Կործանման դատապարտված դասակարգակին թշնա-  
մին գյուղում գաղաղեց և կատաղի դիմադրություն ե  
ցույց տալիս գյուղի կոլեկտիվացման:

«Կոլտնտեսական շարժման լայն ծավալումը,—ինչ-  
պես նշեց եկ Նորեմբերիան պլինումն իր վորոշումների  
մեջ, ընթանում ե դասակարգակին պալքարի սրման և  
նրա ձեռերի ու մեթոդների փոփոխման հանգամանք-  
ներում՝ գյուղում։ Կուլակության կողմից կոլեկտիվաց-  
ման դեմ մղվող ուղղակի և աշկարա պալքարի ուժե-  
ղացմանը զուգընթաց,—պալքարի՝ վոր պարզապես  
տերըրիլե վերածվում (սպանություններ, հրկիզում-  
ներ, մխասարարություն), կուլակները հետզհետե ա-  
վելի հաճախ պալքարի և շահագործման սքողված և  
թագուն ձեռերին են անցնում, թափանցելով կոլտնտե-  
սությունները և նույնիսկ կոլտնտեսությունների կա-  
ռավարչության որդանները, վորպեսզի նրանց ներսից  
քալքային և պալքեցնեն։»

Այդ քալքայիչ աշխատանքը կոլտնտեսության մեջ  
կուլակը զանազան ճանապարհներով և տանում։ Կոլ-  
տնտեսության մեջ կուլակն աշխատում և զավել ար-

տագրության միջոցների հանրացման քափն ու չափերը Կոլեմենտությունից գուրս կուլակն ազիտացիա յե անում, մանավանդ տառանվող միջակների մեջ, հանրացված սերմֆոնից կազմելու դեմ, օրամաղրում և նրանց եժանազին վաճառել յեզ ծախծինել բանող անասունը, ինվենտարը յեզ այլն:

### III

#### ՊԱՅՔԱՐ ԿՈՒԼԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Դյուլում կուլակը դասակարգային թշնամու ամենաարնխում, ամենակատաղի տիպն և հանդիսանում: Այսորվանից չի, վոր մենք պայքար ենք մղում կուլակի դեմ. սակայն այժմ գյուղատնտեսության կոլեկտիվացման բուռն աճման առընչությամբ՝ փոխվել ե թե կուլակի դերը և թե մեր վերաբերմունքը դեպի նա: Անհատական տնտեսությունների համատարած միացումը կոլեկտիվներում հնարավորությունն և տալիս կուլակային խոռոր առաջրությունը փոխարինել կոլեմենտությունների յեզ խորհենառությունների խոռոր առաջրությամբ: Այդ հնարավորությունը մեզ համար վճռական նշանակություն ունի, վորովհետեւ կոլտնտեսությունների և խորտնտեսությունների արտադրությունը լոկ խոշոր արտադրություն չե, այլ սոցիալիստական տիպի խոշոր արտադրություն:

Կուլակն իր դիրքերն ինքնակամ չի հանձնի և չի լել հանձննելու և նա դիմադրությունն ե ցույց տալիս և պատրաստվում և ել ավելի մեծ դիմադրության՝ կուսակցության և խորհրդալին իշխանության և, առաջին հերթին, գլուղի կոլեկտիվացման հանդեպ:

Մի կողմից՝ կոլեկտիվացման աճումը, մյուս կողմից՝ կուլակի ուժեղացող դիմադրությունը ստիպեցին կուսակցությանը խնդիր դնել կուլակի շահագործական միտումները սահմանափակելու քաղաքականությունից անցնելու «ապակուլակացման» քաղաքականության և հետագալում՝ կուլակի՝ վորպես դասակարգի, լիակատար լիկվիդացիալին։ Բայց ապակուլակացումը մի խնդիր է, վոր բղխում ե կոլտնտշարժման աճումից, և հետեւարար կարող ե անցկացվել միտան այդ աճման կապակցությամբ։ Ապակուլակացումը պետք ե տարվի համատարած կոլեկտիվացման շրջանններում և համատարած կոլեկտիվացման բաղադրի վրա։

Ինչում պետք ե կայանա ապակուլակացման և կուլակության՝ վորպես դասակարգի, լիկվիդացիալի լենթարկելու քաղաքականությունը։ Կուլակությանը արագության յեզ օահագործության բոլոր միջոցներից, ուրիշների աշխատանքի հասվին ապրելու բոլոր հետարարվություններից գրկելու մեջ։ Համատարած կոլեկտիվացման շրջաններից պետք ե դուրս քշել կուլակին, նրա ձեռքիցն առնելով գլուղատնտեսական բոլոր մեքենաները և ամրող ինվենտարը։ Կուլակներից վերցված դույքը և արտադրության միջոցները պետք ե հանրացնել կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերի մեջն առնելու ճանապարհով։

Խորհրդակին իշխանության և կոլտնտշարժման ղեմակատիվորեն ծառացող կուլակների նկատմամբ պետք ե գործադրվեն առանձնապես խիստ միջոցներ։ Բացի ամբողջ գույքի գրավումից, հողից ոգտվելու իրավունքից զրկելուց՝ այդ կուլակներին պետք ե հետամտել նաև դատական կարգով։ Նույնչափ խիստ միջոցներով

պետք և վերջ տրվի կուլակի վնասարար գործունեցությաննու ազիտացիային կուլակների գործունելության և ազիտացիայի ամենավտանգավոր ձևերը հանդիսանում են նաև անասունների գիշատիչ մորթոտումն ու ինվենտարի ծախծնումը և կուլակի հրահրության ուրիշներին՝ նույնն անելու համար Պալքարի միջոցները՝ առասուններին գիշատիչ կերպով մորթոտելու դեմ, նախատեսնված են կառավարության հատուկ վորոշումով։ Գիշատիչ կերպով անասուններին սպանող կուլակներին կամ ուրիշներին սաղրողներին՝ վոր նույնն անեն, որենքը նախատեսում և հողոգտագործության իրավունքից զրկել, ինչպես և գրավել անասուններն ու զբուղատնտեսական ինվենտարը, միաժամանակ քրեյական պատասխանառվության յինթարկել նրանց, ընդ ամիս՝ դատարանը զրկում է նրանց ազատությունից մինչև 2 տարի, վտարելով նրանց տվյալ վայրից կամ առանց վտարման։

Իսկ վոչ-կուլակալին անտեսությունների վերաբերությամբ, վորոնք կոլտնտեսություն մտնելուց առաջ մորթում կամ վաճառում են իրենց անասունները, որենքն ազգելու ուրիշ միջոցներ և սահմանում, այսինքն՝ արգելում և կոլտնտեսություն մտնել կամ վտարում և կոլտնտեսությունից՝ հետագայում կոլտնտեսության մեջն ընդունել կարող ե, յեթե գիշատիչ կերպով նրանց ծախծնած անասունները կվերականգնվեն կամ այդ անասունների գինը կմուծվի կոլտնտեսություն։ Այդ ռարեւուրյունը, վոր ուենքը զնում է կուլակալին յեզ վոչ-կուլակալին օնօնտերյունների մեջ, ովեաք և խօսուեն կենսագործվի։

Հակառակ աջերի ամեն տեսակի բարեհոգի զրուց-

ներին, թե հնարավոր և կուլակի խաղաղ ներաճումը  
սոցիալիզմի մեջ, ինչ չափով գյուղում աճում և կո-  
լիկտիվացումը, կատարվում և դասակարգավին պալքա-  
րի սրում: Կուլակը կոլտնտեսության մեջ՝ նույն և թե  
դայլը վոչխարի փարախում: Ալստեղից ել բղխում և  
մեր վերաբերմունքը կուլակին կոլտնտեսության մեջն  
ընդունելու խնդիրներին և արդեն կոլտնտեսություն  
սողոսկած կուլակին: Վոչ մի դեպքում չի կարելի  
կուլակին կոլտնտեսություն ընդունել: Ամեն տեսակի  
միջոցներով պետք և վերջ դնել կուլակի կոլխոզ թա-  
փանցելու հնարավորություններին, պալքարել կեղծ-  
կոլտնտեսությունների դեմ և վճռապես մաքրել կոլ-  
տնտեսությունները կուլակալին, հակախորհրդալին, սո-  
ցիալապես-խորթ աարբերից: Յերկաթե ավելով պետք  
և դուրս գոնդել կոլտնտեսություններից բոլոր արդպի-  
սի տարրերին, գրավելով ամբողջ գույքը և խիստ պա-  
տասխանատվության յենթարկելով նրանց, վորոնք  
կոլտնտեսություն են մտել քալքալելու նախանկտա-  
դիտավորությամբ:

#### IV

### ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կոլտնտեսության մեջ ծանրության կենցոնք  
պես և փոխագեն այն նոր կոլտնտեսությունների օփ-  
նացարության վրա, վորոնք են վուազում ևն չխպարու-  
թյան յեզ միջակեների իրական մասսայական շարժ-  
ման վրա: Կոլտնտեսություններ և ապակուլակացում  
կաղմակերպելու պրոցեսներին զուգընթաց՝ անպայ-  
ման ոլետք և յեռանգուն աշխատանք տարվի կոլտըն-

տեսություններն ամրապնդելու, նրանց վորակը բարձրացնելու և բարձր աստիճանի վրա դնելու նրանց:

Կոլտնտեսության վորակական կողմը բարձրացնելու, նրան ներսից ամրացնելու հենց այդ խնդիրն ե, վոր առաջ քաշեց ընկ. Ստալինը մարքսիստ հողաշինարարների կոնֆերանսում արտասանած իր ճառի մեջ ասելով, թե կուլակությանը՝ վորպես դասակարգի, վերջ տալը «սոսկ վարչական միջոց չե»:

Կոլտնտշարժման լայն զարգացումը արտադրությունը կանոնավոր և պլանաշափ կազմակերպելու, նրանում հարաբերությունները կանոնավոր կերպով հարդարելու խնդիրն ե դնում իր ամբողջ հասակով մեկի Գործն անհմուտ և անկարգ կերպով դնելիս՝ մենք կարող ենք կանգնել այն փաստի առաջ, յերբ հանրացված տնտեսությունը չի տա այն կարեոր եֆեկտը, վորոբյեկտիվորեն դրված ե նրա մեջ: Ընդհակառակն՝ գործը կանոնավոր կազմակերպելիս, կոլտնտեսությունը պետք ե արագությամբ հայտնաբերի իր առավելությունները անհատական տնտեսության հանդեպ, վորպեսզի վերջնականապես համոզի չքավորին և մանավանդ տատանվող միջակին: Թե մենք՝ կոմունիստներս ենք ուղիղ, այլ վոչ թե կուլակը, վոր ադիտացիա յեարել կոլտնտեսության դեմ:

Վորպեսզի կոլտնտեսությունը կարողանա իրոք որինակելի տնտեսություն դառնալ, իրոք գլուղի սոցիալիստական վերանորոգման ոջախ հանդիսանալ, պետք ե իրագործել հետևյալ ձեռնարկութեալը.

## Ա. Արտադրության կազմակերպման բնագավառում.

1. Անհրաժեշտ ե կոլտնտեսությունների արտադրությունն այնպես դնել, վոր յեղած տեխնիկալից և ու-

սուրսներից առավելագույն եֆեկտն ստացվի: Պետք ե կտրականապես հրաժարվել այն մտքից, իրը թե կոլտնտեսությունը կարող ե կազմակերպվել միայն մեքենաքարշ ուժի բազալի վրա: Կոլտնտեսությունների արտադրությունը կարելի յէ դնել և բարձրացնել և՝ մեր ունեցած կենդանի քարշութով և՛ մեր ինվենտարով, դրա համար անհրաժեշտ ե միայն ձեռք բերել կոլտնտեսականների արտադրության միջոցների առավելագույն հանրացումը և դրա հիման վրա յել ստեղծել կոլտնտեսություններում ձիա-լեզարին և խառն ձիա-մեքենային բազաներ:

Պետք ե լիակատար բեռնվածությամբ ոգտագործել յեղած ամբողջ ինվենտարը: Մեզնում հազվագյուտ չեն այնպիսի դեպքեր, յերբ մեր ունեցած տրակտորների և գյուղատնտեսական մյուս մեքենաների սահմանափակ քանակությունը մի թեթև փչացման հետևանքով ամբողջ ամիսներով չի աշխատում: Անհրաժեշտ ե շտապ կարգով նորոգել նրանց և գործի դնել:

Ա.Ս.Ֆևէ-ի պայմաններում, յերբ գյուղատնտեսությունը մեքենայական քարշութով ապահովված չի և յերբ կոլեկտիվացման արագ պրոցեսներ են տեղի ունենում, վորոնք՝ սակայն, չեն կարող և չպետք ե դանդաղեն տրակտորների բավարար քանակություն չունենալու պատճառով, կոլտնտեսությունները կենդանի քարշութով ապահովելու խնդիրը շատ ավելի կարևոր նշանակություն ե ստանում: Ալդ ապահովումը պետք ե տարվի լծկաններ բերել տալու ճանապարհով այն տեղերից, վորոնք մեքենայական քարշութին են անցել և այն չքավոր միջակային մասսաների կենդանի քարշութի և արտադրության բոլոր միջոցների հան-

բացումն ուժեղացնելու ճանապարհով, վորոնք կոլտընտեսություն են մտնում: Հենց այդ նպատակի համար ել անհրաժեշտ ե ձիա-լեզա-մեքենային՝ խառն կալաբաններ ստեղծել: Ընդ սմին՝ վոչ մի գեպքում չպետք ե թուլացնել կոլտնտեսություններին անհրաժեշտ մեքենաներ մատակարարելու հոգսը:

Խոշոր կոլտնտեսություններ ստեղծելու հիմնական ճանապարհներից մեկը (կոլտնտեսություններ, վորոնք ամբողջ գյուղեր և շրջաններ են ընդգրկում) մեքենատրակտորային կայարաններն են, այսինքն՝ այնպիսի կայարաններ, վորոնք մեծ քանակությամբ մեքենաներ և տրակտորներ ունեն: Կայարանի աշխատանքն եժան ե և գյուղացին բավական գյուրությամբ գնում և եժան տրակտորային քարշ ստանալու հանրացված վարի համար: Առաջիկա գարնանը ԱՄՖԽՀ-ում պետք ե կազմակերպվի 6 մեքենա-տրակտորային կայարանից վոչ պակաս՝ Վրաստանում 3 (Բորչալուի, Գորու և Աջեմետի շրջաններում), Աղբբեջանում՝ 2 (Բարդայի և Գյանջայի շրջաններում), Հայաստանում՝ 1 (Սարդարաբատի շրջ.): Այդ կայարանները պետք ե լավ կազմակերպել: Նրանց պարտականությունն ե կոլտնտեսությունների հողերը մշտակել պայմանագրերի հիմունքով: Կոլտնտեսությունները պետք ե լայնորեն ոգտագործեն ալդ կայարանները: Անհրաժեշտ ե կոլտնտեսությանը կից ունենալ նորոգման լավ արհեստանոց, վորովհետեւ մեքենաները հաճախ փչանում են, ուստի և լերկարժամանակ չեն բանում, ահազին գեֆիցիտ տալով:

2. Զափազանց կարեոր ե կոլտնտեսությունների ցանքալաշտերը սերմաց ւողվ ապահովելու խնդիրը: Անհրաժեշտ ե կոլտնտեսություններին կից տեղական

սերմֆոնդեր ստեղծել: Դրանից ե կախված ցանքերի հրապարակներն ընդլայնելու հաջողությունը: Կոլտընտեսական սերմֆոնդերն այնպիսի չափերով պետք ե ստեղծել, վորոնք ապահովեն ամեն մի կոլտնտեսության լիուլի պահանջած սերմացուն: Պետք ե հիշել, վոր այդ կողմից պետությունից ոկնություն սպասելու կարիք չի լինի: Սերմացուի ծախծիումը տկներև և չարագույն մնասարարությունն ե: Այդ խնդրում կուլակությունը նոր լեզանակներ ե գտնում կոլտնտեսական շինարարության դեմք պալքարելու համար: Զքավորին և միջակին կոլտնտեսությունն մտնելուց առաջ տրամադրելով վաճառել և ուտել սերմացուն, կուլակը ջտնք ե թափում այդ ճանապարհով խափանել կոլտընտեսության սերմանման պլանը և քալքայման սպառնալիքի տակ դնել կուսակցության և կառավարության այն ձեռնարկումները, վորոնք ցանքերի հրապարակների ընդլայնմանն են վերաբերում: Անհրաժեշտ ե կտրուկ կերպով վերջ տալ այդ մնասարար ագիտացիալին և հարգածալին կարգով ձեռք զարկել սերմֆոնդեր ստեղծելու տեղական ռեսուրսներից: Միայն բացաւիկ դեպքերում առանձին սակավաբեր շրջաններում կարելի լե հույս դնել պետության մասնակի ոգնության վրա: Այդպիսի լերնույթների դեմ պալքարելու կոնկրետ միջոցն ե կոլտնտեսություններ չընդունել նրանց, ովքեր կոլտնտեսությունն մտնելուց առաջ կծախեն սերմացուն:

Սերմացուն հանրացված ֆոնդերի վրան ածելու պլանը պետք ե հայտնի լինի ամեն մի կոլտնտեսականի, նոր կոլտնտեսություններ կազմելիս՝ սերմֆոնդեր կազմել միաժամանակ կոլտնտեսություններ կազմելու հետ

միասին, վերցնելով կոլտնտեսության ամեն մի նոր անդամից սերմֆոնդ, նրա տնտեսության ուժին համապատասխան չափով։

Անհրաժեշտ ե նույնպես անձեռնմխելի ֆոնդեր ստեղծել լերաշտի, տարերային աղետների դեպքերի համար։ Այդ ֆոնդերը պետք ե ծառալեն նույնպես ոգնություն ցույց տալու (փոխարինաբար) այն կոլտնտեսություններին, վորոնք հարգելի պատճառներով չեն կարողանում սերմացուով ապահովել իրենց։

Սերմֆոնդերը պետք ե ապահովվեն համապատասխան շտեմարաններով, վորպեսզի չենթարկվեն փչացման և վոչնչացման։

Անհրաժեշտ ե մտցնել սերմերի պարտադիր տեսակավորում և զտում։

Մաքրված սերմացուով կատարված ցանքը բերքատվությունը 15 տոկոսից ավելիով ե բարձրացնում։ Անհրաժեշտ ե լիովին բեռնել հացահատիկները զտող մեքենաները։ Պետք ե այնպես անել, վոր մեր ունեցած առանց այն ել սակավաթիվ մեքենաները ամբողջ տարին բանեն։ Մինչդեռ մեղնում հաճախ այդ սակավաթիվ մեքենաներն իսկ ոգտագործվում են ցանքից միայն մի քանի ժամ առաջ, իսկ մնացած ժամանակ պարագ կանգնում են։ Այդ բանը չափազանց վհչուացիոնալ ե։

Պետք ե կոլտնտեսություններին տեսակավոր հացահատիկներ մատակարարել, սովորական հացահատիկներով փոխանակելու ճանապարհով։ Տեսակավոր հացահատիկի վոչ մի ֆունտ պարենի համար չպետք է դործածվի, լերը վոչ-տեսակավոր սերմֆոնդեր կան։

3. Կոլտնտեսությունների արտադրության կանոնա-

վոր դրվածքի պալմանն և հանդիսանում արտադրական պլանների ժամանակին և կանոնավոր կաղմելը, կոլտնտեսության արտադրությունը սկզբունքով սոցիալիստական արտադրություն և, ուստի և ճիշտ պլանավորման պետք ունի: Արտադրական պլանը պետք ենախատեսի գլուղատնտեսական արտադրության հիմնական ուղղության ընտրությունը, վերամշակման տեսակներն ու լեղանակները, ցանքափոխության կանոնավոր գրուէքի խնդիրները, արտադրության լեղածմիջոցների կանոնավոր ոգտագործման և բանվորական ուժի խնդիրները և այլն: Արտադրական պլաններն անբաժանելի պետք են կապել կոնտրակտալին պալմանագրերի հետ:

Արտադրական պլանները պետք են կազմված լինեն կոլտնտեսականների մասնակցությամբ հենց տարվա սկզբին և բաժանվեն որացուցալին հաստատուն ժամկետների վրա:

4. Կոլտնտեսությունների արտադրությունը բարձրացնելու կարեոր ֆակտոր են հանդիսանում դրամական ֆոնդեր կազմելն ու հանրացնելը, ուստի կոլտընտեսությունները պետք են դրամական միջոցներ պատրաստեն տրակտորներ և գլուղատնտեսական մեջենաներ գնելու համար:

Անբաժանելի ֆոնդերի չափերը կոլտնտեսականների դիտակցության և կոլտնտեսություններին անձնվեր լինելու աստիճանի լավագույն ցուցանիշն է: Մյուս կողմից, անբաժանելի ֆոնդը կոլտնտեսությունների նյութական-տեխնիկական բազայի ամրացման լովագույն լեղանակն է հանդիսանում: Ուստի, մասնատրումներ անբաժանելի ֆոնդին պետք են կատարվեն այն

չափերով, վոր համապատասխան լինեն կոլտնտեսությունների հաշվեկշռին և շահութների չափերին:

5. Իրենց արտադրության բարձրացումով կոլտնտեսությունները պետք ե կոլտնտեսությունների ապրանքայնության բարձրացում ձեռք բերեն և ապահովեն ապրանքային ավելցուկների պլանալին հանձնումը պետության: Ապրանքայնության բարձրացումը հավասարապես անհրաժեշտ ե թե կոլտնտեսություններին և թե պետության:

Ապրանքայնության բարձրացումը հնարավորություն և տալիս կոլտնտեսությանը մեծացնելու իր նյութական և դրամական ռեսուրսները, ստանալու ագրոտեխնիկական և վարկային ոգնություն, ստանալու սպառողական ապրանքներ, իսկ պետությանը—ստանալու ժողովրդական տնտեսության համար անհրաժեշտ հումուկիթը:

Այդ փոխանակությունը կոլտնտեսության և պետության մեջ պետք ե իրագործվի կոնտրակտացիալի հիմունքով:

6. Գյուղատնտեսության բարձրացման հիմնական ձևերից մեկը կոնտրակտացիան ե, վորը նպաստում և գյուղացիական տնտեսությունները մասսայաբար ներգրավելու սոցիալիստական շինարարության մեջ: Պետությունը՝ պայմանագիր կնքելով, կոլտնտեսություններին մատակարարում և տեխնիկայի բոլոր նվաճումները և նրանց դնում ե որինակելի բարձրության վրա: Պետությունը բարձրացրած զին ե վճարում ավելի բարձր վորակ ունեցող մթերքի համար: Այդ բանը դրդում ե գյուղացուն պետության համար կարևոր կուլտուրաներ զարգացնելու, տնտեսավարության բարե-

լավված ձևերն ոգտագործելու և տնտեսության լեկամը-  
տարերությունը բարձրացնելու:

7. Գլուղատնտեսության նշված վերակառուցման ի-  
րագործումը պահանջում ե՝ լիկվիդացիալի լինթարկել  
գլուղի հողագործական-ագրոնոմիական անգրագիտու-  
թյունը, գլուղատնտեսական գիտելիքների տարածումը  
գլուղացիների մեջ։ Այդ բանի համար անհրաժեշտ ե  
խոշոր կոլանտեսություններին կից կազմակերպել հա-  
տուկ դասընթացքներ և խմբակներ՝ գլուղատնտեսա-  
կան գիտելիքներ տարածելու համար։

8. Կոլտնտեսություններում աշխատանքի հաջողու-  
թյունն անհնարին և առանց համապատասխան աշխա-  
տանքալին դիսցիպլինի։ Պետք ե կոլտնտեսություն-  
ներում կարգապահությունը պատշաճ բարձրության  
վրա գնել, պետք ե այնպես անել, վոր կոլտնտեսու-  
թյան ամեն մի անդամը պատասխանատու լինի իր կա-  
տարած աշխատանքի համար։ Աշխատանքալին կար-  
գապահությունը կոլտնտեսական աշխատանքի հաջո-  
ղության գրավականն ե։

Առանց աշխատանքալին դիսցիպլինն արմատացնե-  
լու և աշխատանքի արտադրողականությունը բարձ-  
րացնելու չի կարող կանոնավոր կերպով կազմակերպ-  
վել և վհչ մի արտադրություն և վհչ մի արտադրա-  
կան պլան չի կարող կատարվել, ուստի և կոլտնտե-  
սության կառավարման որգանները և կոլտնտեսական  
ամբողջ հասարակայնությունը պետք ե այս կողմի վրա  
կրկնակի ուշադրություն դարձնեն։ Կոլտնտեսություն-  
ներում աշխատանքի արտադրողականությունը բարձ-  
րացնելու համար պետք է սահմանվեն մշակման և գնա-  
տատության նորմաներ՝ կոպարներ, անհրաժեշտ և մտցը-

նել պարզեցած խություն — պըսեմիա տալը, աշխատանքը կազմակերպել մըցման հիմունքով թէ կոլտնտեսությունների ներսում և թէ կոլեկտիվների միջև։ Սոցիալիստական մըցումը՝ կոլտնտեսականների միջինավոր մասսաների մասնակցությամբ կարող ե կոլտնտեսությունների արտադրության բարձրացման հզոր ֆակտորը դառնալ։

## Բ. Ներկոլունեսական հարաբերությունների հարդարման բնագավառում։

1. Կոլտնտեսությունների կյանքում շատ կարևոր մոմենտ ե հանդիսանում աշխատանքի կազմակերպման և՝ կոլտնտեսականների միջև մթերքների բաշխման պըրոբլեմը։ Այս լերկու խնդիրներն այն ճեղքերն են, վորոնց միջով կուլակը կոլտնտեսություն և խցկում իր տնտեսական քաղաքականությունն ու տակտիկան։

Այս խնդիրները պետք ե մանրամասնարար մշակվեն կոլտնտեսությունների մեջ։ Պետք ե աշխատանքն այնպես կազմակերպել և բաշխել, վոր կոլտնտեսության մեջ ամբողջ բանվորական ուժը լիովին և լավագույն կերպով ոգտագործվի։ Անհրաժեշտ ե կոլտնտեսություններից դուրս մղել մանր անհատական տնտեսությանը հատուկ այն գիծը, լերբ տնտեսության բոլոր աշխատավորները 3—4 ամիս շարունակ կաշվից դուրս գալով աշխատում են, իսկ տարվա մնացած ամիսներին բոլորովին պարապ մնում։ Նույնքան ել անհրաժեշտ ե լուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքի ուացիոնալ ոգտագործումը, մանավանդ՝ կնոջ աշխատանքի, ինչ վոր մանր անհատական տնտեսությունների ժա-

մանակ դուրս եր քցվում և ինչ վոր հնարավոր ե դառն  
նում միայն տնտեսության կոլեկտիվ ձևերի ժամանակ,  
վորոնք հնարավոր են դարձնում աշխատանքի պլանա-  
լին բաշխումը։ Կոլտնտեսականների աշխատանքի կա-  
նոնավոր կազմակերպումով պետք ե աշխատանքալին  
այնպիսի հարաբերություններ ստեղծել կոլտնտեսա-  
կանների միջև, վորոնք արմատաքի, արմատախիլ ա-  
նելին նրանց մանր-սեփականնոտիրական բնագղներն  
ու ձգտումները։

Կարեռը նշանակություն ե ստանում կանանց աշխա-  
տանքի կազմակերպումը կոլտնտեսությունների մեջ։  
Դարավոր տրադիցիաները (վորոնք մինչև այժմ ելդեռ  
դուրս չեն նետված) կնոջը շատ ծանր կացության մեջ  
են դնում։ Կոլտնտեսական կանանց համամիութենա-  
կան համագումարում Հյուսիսալին Ոսետիալի պատվի-  
րակուհի ընկ. Բագրայեվան հայտարարեց, թե մինչև  
որս ել կինը մի շաբք կոլտնտեսություններում զբաղ-  
վում ե նրանով, վոր ամուսնու վոտքերն ե լվանում։

Կոլտնտեսություններում աշխատանքը կանոնավոր  
կերպով կազմակերպելու միջոցներից մեկն ե—լայնո-  
րեն զարգացնել կոլտնտեսություններում ձեռնարկու-  
թյուններ՝ գլուղատնուեսության մթերքների սկզբնա-  
կան վերամշակման համար, արտելներ՝ շինարարական  
աշխատանքների համար, գուլպագործական, գորգա-  
գործական տնայնագործական միություններ և այլն՝  
կանանց համար։

2. Աշխատանքի կազմակերպման հետ սերտ կապ ու-  
նի մթերքների բաշխման կամ կոլտնտեսականների աշ-  
խատանքը վարձատրելու խնդիրը։ Կոլտնտեսություն-  
ներում այդ խնդիրը պետք ե լուծվի այնպես, վոր կոլ-

տնտեսություններում սոցիալիստական կուտակում ստեղծելու համար խթան հանդիսանա և խոչընդուռ դառնա անհատական կուտակման, վորպեսզի դուքս մղվի դասակարգային պալքարը, վորը առաջին շրջանում կոլտնտեսություններում անխուսափելի է:

Անհրաժեշտ է, վոր աշխատանքի վարձատրության խնդիրը կոլտնտեսություններում միակերպ լուծվի, մինչդեռ այժմ այդ խնդրում չափազանց բազմազանություն ե նկատվում: Վորպես սկզբունք՝ մթերքների բաշխման հիմքում պետք ե դրվի բաշխումն ըստ ներդրված աշխատանքի քանակի և վորակի:

3. Աշխատանքի կանոնավոր կազմակերպումը և մթերքների կանոնավոր բաշխումը կոլտնտեսություններում յենթադրում ե գործառնությունների և աշխատանքի հաշվառման դրվածք՝ կոլտնտեսություններում: Այդ բանը մեր կոլտնտեսությունների աշխատանքի ամենաթուլ կողմն ե: Անհրաժեշտ ե շտապ կարգով հարդարել կոլտնտեսականների աշխատանքի հաշվառման գործը, վորի համար անհրաժեշտ ե ապահովել կոլտնտեսությունները հաշվետար աշխատավորներով:

4. Կոլտնտեսություններում շատ կարևոր նշանակություն ունի կուլտուր-կենցաղային աշխատանքը—հասարակական սննդի ճաշարանների, մսուրների, ակումբների և այլն կազմակերպումը: Այդ աշխատանքը նորոգում և աւողջացնում ե գյուղացիական ամբողջ հոգեբանությունն ու կենցաղը: Առանձնապես ուշադրության պետք ե առնել կուլտաշխատանքի համար միջոցներ հավաքելու գործը: Զնալելով վոր վորոշում կա անզուտ յեկամտի 2 տոկոսը մասնադրելու այդ նպատակին, սակայն մի քանի կոլտնտեսություններ այդ

վորոշումը չեն կենսագործում։ Կուլտուր-կենցաղական  
աշխատանքի միջոցների համար իրեն աղբյուր պետք  
են ծառալի նուև այդ կարիքների համար մի հատուկ  
հեկտար հող վարելու լայն գործադրությունը։

## V

### ԴԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՑԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Կոլտնտեսական շարժումը նոր շարժում եւ և նա կա-  
տարվում ե վոչ թե խաղաղ, հանգիստ ճանապարհով,  
այդ դասակարգալին սուր պարզաբն հանգամանքնե-  
րում։ Ուստի, դեկավարության և նրան գործառնա-  
կան-կազմակերպչական ոգնություն հասցնելու խըն-  
դիրները քաղաքական հսկայական նշանակություն են  
ստանում։ Իրենց զարգացման առաջին շրջանում կոլ-  
տնտեսությունները կտրիք են զգում պետության ա-  
մենաակտիվ, իրական ոգնության և աջակցության։

Ցեվ Խորհրդակին իշխանությունը այդ ոգնությունը  
ցույց ե տալիս, ինչով կարող եւ կոլտնտեսական շի-  
նարարության հետ անմիջական շփումն ունեցող պե-  
տական որդանների գործն ե այդ ոգնությունը ժա-  
մանակին հասցնել կոլտնտեսություններին։

Զշշափելով այժմ ձեռնարկումների այն բարդ կոմպ-  
լիկտը, վորոնք ուղղված են դեպի գյուղատնտեսու-  
թյան սոցիոլիստական վերակառուցումը և գյուղա-  
տնտեսության մեջ կատարվող նոր, չտեսնված պրո-  
ցեսների գործառնական-կազմակերպչական սպասար-  
կումների բազմազան տեսակներն ու ձևերը, անհրա-  
ժեշտ ե՝ այնուամենայնիվ, նկատել, թե կոլխոզը չի  
կարող աճել։

Սուանց ժամանակին յեզ կանոնավոր հողափնտարարության ուստի անհրաժեշտ ե ամեն կերպ ուժ տալ հողաշինարարական աշխատանքներին. հողաշինարարությունը կոլտնտեսության տերրիտորիալի կազմակերպությունն ե, ուստի և այնպես պետք ե տանել այն, վորպեսզի նա առավելագույն չափով նպաստի կոլտնտեսությունների ամրապնդմանը և թեթևացնի պայքարը կուլակի դեմ.

Սուանց ամբացնելու կոլտնտեսությունների արքադրական-օնխանիկական բազան. ուստի անհրաժեշտ ե ժամանակին մատակարարել կոլտնտեսություններին նրանց հասանելի մեքենաները, սերմացուն և այլ արտադրական նյութերը. անհրաժեշտ է արագացնել մեքենա-տրակտորային կայարանների և կոլոնների կազմակերպումը, նորոգող արհեստանոցների կազմակերպումը և այլն.

Սուանց բավարար ազրողնության, վոր անհրաժեշտ ե, վորպեսզի կոլտնտեսականներին հնարավորություն տրվի հրաժարվել հին, պապենական լեզանակներով տնտեսություն վարելուց և անցնել այն նոր լեզանակներին, վորոնք զգալի չափով թեթևացնում են աշխատանքը և մեծացնում նրա արտադրողականությունը.

Սուանց կոլտնտաօխատավորների համապատասխան կազրեր պատրաստելու —վարչաշխատավորների, ֆինհաշվետար աշխատավորների, ղեկավարների և այլն:

Ինչ վերաբերում ե կոլտնտշինարարության ղեկավարության, մենք այդ ղեկավարության բոլոր կարևորագույն տեսակներից և ձեռներից կկամենանք նշել ալստեղ հետեւյալ լերկուսը՝ ղեկավարություն կոլտնտե-

սութիան որգանների կողմից և ղեկավարություն գլուղ-  
որգանների ընտրլալների կողմից:

## VI

### ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵԿԱՎԱՐ ՈՐԴԱՆՆԵՐԸ

Ներկոլտնտեսական շինարարութիան ամենամերձա-  
վոր և անմիջական ղեկավարությունը՝ ինքնըստինքան  
հասկանալի լի, ընկնում և կոլտնտեսութիան ղեկա-  
վարների և ղեկավարող որգանների վրա:

Կոլտնտեսությունների ղեկավարները պետք ե գի-  
տենան և իրազործեն իրենց ղեկավարությունը, լեռ-  
նելով այն բանից, թե չքավորները և՝ մանավանդ,  
միջակները կոլտնտեսություն են մտնում ղեռ իրենց  
հատուկ մանր-սեփականատիրական տրամադրությամբ  
և թե այդ տրամադրությունից նրանք կազմավեն մի-  
այն աստիճանաբար, թե այդ տրամադրությունները  
անխուսափելիորեն պետք ե հակասություններ սննդեն  
կոլտնտեսությունների ներսում, ուստի և դասակար-  
գալին պարզաբար կոլտնտեսութիան մեջ ղեռ կշարու-  
նակվի, թերեւ նաև ուրիշ ձևերով։ Այդ պարմաննե-  
րում ղեկավարի ակտիվությունից, զգաստությունից  
և հմտությունից ե կախված, թե կոլտնտեսությունը  
զարգանալով արտադրության և աշխատանքի իսկա-  
կան-սոցիալիստական բջիջ ե դառնալու, թե կանգ ե  
առնելու իր զարգացման սկզբնական, պրիմիտիվ փու-  
լերի վրա։

Կոլտնտեսությունների ղեկավարները պետք ե այն-  
պես կազմակերպեն աշխատանքը և կոլտնտեսութիան  
մեջ մթերքների բաշխման այնպիսի ձևեր գործադրեն,

վորոնք վոչ միայն չմեծացնելին առաջին շրջանի համար անխուսափելի սոցիալական հակասությունները կոլտնտեսության մեջ, այլ՝ ընդհակառակն, նպաստելին այդ հակասությունների արագ դուրս քշվելուն՝ կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների զարգացման հիմունքով: Կանոնավոր կերպով կազմակերպել կոլտնտեսությունների արտադրությունը, նպաստել արտադրության միջոցների ամենակերպ հանրացման, ճիշտ լուծել կենցաղային խնդիրները, միջոցներ ձեռք առնել առողջացնելու և բարելավելու կոլտնտեսական բնակչության կյանքի պայմանները, մանավանդ կանանց և յերեխաների կյանքի պայմանները և այլն և այլն,—ահա՝ մոտավորապես, թե ինչ հոգսեր են բաժին ընկնում կոլտնտեսությունների ղեկավարներին:

Կոլտնտեղինարարության գործում վոչ պակաս կարեոր նշանակություն ունի գյուղի ընտրովի որգանների և նրանց մեջ հատկապես գյուղխորհուրդների ղեկավարությունը:

## VII

### ԳՅՈՒՂԵՆՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԴԵՐԸ

Գյուղատնտեսության վերակառուցման և նրան սոցիալիստական ձևի վերափոխելու տվյալ ետապում զգալի չափով խոշորանում ե գյուղխորհուրդների տընտեսական-քաղաքական նշանակությունը:

Եերբ գյուղն անցնում ե կոլեկտիվ սկզբունքներով դրված տնտեսարարության, դրա հետ միասին գյուղխորհուրդների առաջ ել դրվում են նոր ֆունկցիաներ և

խնդիրներ՝ ղեկավարել ամբողջ կոլտնտեսական շարժումը և կոլտնտեսական շինարարությունը, մասնավորապես՝ ղեկավարել սերմֆոնդեր կազմելը, ղեկավարել կոլտնտեսությունների հողաշինարարությունը, ամեն կերպ ողնել կոլտնտեսություններին նրանցում արտադրությունը բարձրացնելու գործում և գործի ամբողջ դրվածքի բարելավմանը, ակտիվորեն մասնակցել կոլտնտեսությունների արտադրական պլանները կազմելուն և նրանց իրագործմանը, լուծել կոլխոզներին վարկավորելու խնդիրները, աջակցել հանրացման պրոցեսների ուժեղացման, ղեկավարել գյուղացիական կենցաղի վերափոխման պրոցեսները և այլն, ահա մոտավորապես տնտեսական ֆունկցիաների այն նոր շարանը, վորոնք առաջադրվում են խորհուրդներին: Բայց առանձնապես կարեոր և պատասխանատու մի խնդիր և ծառանում գյուղխորհուրդների առաջ, վորը կապված և կուլակությանը՝ իրեն դասակարգի, վերջ տալու հետ:

Այդ խնդիրը հնարավոր և լուծել միայն անցում նախապատրաստելով դեպի համատարած կոլեկտիվացում: Այդ խնդիրը կարելի չե լուծել միայն բատրակ-չքավորական մասսաներին կազմակերպելով, միացնելով նրանց միջակի հետ և կզզիացնելով կուլակին:

Դյուլում, այդ սրվող դասակարգացին պայքարում, խորհուրդները հանդիսանում են պրոլետարիատի դիկտատուրայի ամուր գործիքը: Խորհուրդները պետք են նդիուլ-մոտիկից ղեկավարեն մասսաներին կոլեկտիվացման և կուլակի վրա հարձակվելիս:

Այդպիսով, գյուղխորհուրդները պետք են խիստ կերպով և վճռականորեն վերակառուցեն իրենց աշխա-

տանքն այն հաշվով, վորպեսզի իրոք իրենց լերեսը դեպի կոլտնտեսական շարժումը դարձած լինի:

Սակայն, գլուղխորհրդի նոր ֆունկցիաները վոչ մի դեպքում չեն կարող նվաստացնել նրա վարչական ֆունկցիաները: Խորհուրդներում, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի որդաններում, վոչ միայն պահպանվում են, այլև ել ավելի ուժեղանում են հեղափոխական կարգի պաշտպանության, հողալին բոլոր խնդիրների լուծման, գլուղի բարեշինության հոգացողությունները և այլն:

Սակայն, իրենց այդ խնդիրը գլուղխորհուրդները կարող են կատարել միայն հենվելով բատրակ-չքավորական մասսաների վրա: Դրա հետ միասին գլուղխորհուրդներին կից չքավորության և բատրակության կազմակերպումը պայքարի խնդիր և հանդիսանում տվյալ ժամանակաշրջանի պայքարի համար կոլեկտիվացման ֆրոնտում:

### VIII

## ԶՔԱՎՈՐ-ԲԱՏՐԱԿԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

Զքավոր-բատրակային խմբերի հիմնական խնդիրն այն պետք ելինի, վոր նրանք հենարան դառնան կուլակությանը լուծարքի լենթարկելու գործում, կոլտնըտշարժման իսկական դեկավարության վործում: Առանձնապես հսկայական նշանակություն ունեն չքավորբատրակային խմբերը արտադրական ամենապարզ միություններում և՝ առաջին շրջանում, սկզբնական տիպի (գլուղատնտ. արտել) կոլտնտեսություններում, վորտեղ դեռ հանրացված չե տրտադրության միջոց-

ների մի զգալի մասը, վորտեղ դեռ դուրս մղված չեն գույքալին անհավասարութլունը և ալստեղից բղխող սոցիալական հակասութլունները։ Սկզբնական շրջանում կոլտնտեսութլունների աշխատանքում անխուսափելի բոլոր հակասութլուններն ու աղավաղութներն արմատախիլ անելու խնդիրների շուրջը չքավոր բարակալին խմբերը պետք ե համախմբեն իրենց ամբողջ ուղաղութլունը և կենտրոնացնեն աշխատանքը։



Չքավոր-բատրակալին խմբեր պետք ե կազմակերպել վոչ միայն ամենապարզ տեսակի կոլտնտեսութլուններում և համատարած կոլեկտիվացման շրջանների կոլտնտեսութլուններում, այլև գյուղխորհուրդներին կից, կոռպերատիվների. կառավարչութլուններին կից, մեքենա-տրակտորակալին կայարաններին կից և այլն։ Այդ խմբակներն իրենց աշխատանքով պետք ե ապահովեն դասակարգալին գծի իրականացումը գյուղի քաղաքական և տնտեսական ամբողջ կյանքում։ Դյուղխորհուրդները չքավոր-բատրակալին խմբերի կազմակերպումը խորհուրդներում և գյուղում պետք ե դարձնեն իրենց ամենակարենոր խնդիրը։

Չքավոր-բատրակալին խմբերի աշխատանքը պետք ե տարվի բազմազան ձևերով և բազմազան ճանապարհներով՝ այդ խմբերի ինքնագործունելութլան և նախաձեռնութլան հիմունքով։

Ալստեղ մատնանշված կոլտնտեսական շինարարութլան խնդիրները պետք ե լուծվեն, գյուղի ընտրական որդաններին տուաջադրված պահանջները պետք ե կատարվեն, յեթե մենք ուզում ենք կոլտնտեսութլունը գյուղի սոցիալիստական վերափոխման իսկական ոջախ դարձնել, յեթե մենք ուզում ենք արմա-

տախիլ անել կտպիտալիստական հարաբերությունները գյուղատնտեսության մեջ:

Կուսակցության ղեկավարությամբ, խորհրդակին որդանների ակտիվ աշխատանքով, չքավոր բատրակակին մասսաների աջակցությամբ և քաղաքի պրոլետարիատի ոգնությամբ պատմական զարգացման ընթացքով դրված գյուղատնտեսության վերակառուցման խնդիրը սոցիալիստական արտադրության բաղայի վրա պետք է կատարվի և կկատարվի:




~~F~~

333-16

5-84

-014.

Գիրք և 8-ինք.,  $\frac{3}{4}$  մամ (Մ.)




---

Դ. Еրզинկյան  
БОЕВЫЕ ЗАДАЧИ КОЛХОЗНОГО  
СТРОИТЕЛЬСТВА  
Госиздат ССР Армении  
Эривань, 1930 г.

---





ԳԱԱ Համեմարտ Գիլ. Գրադ.



FL0066980

ԱՐԵԿ  
ՕՐԻՆԱԿ

Ա 10713